† ՌԵԹԷՈՍ Է.Ֆ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ապրիլի 8-ին Կ. Պոլսում իւր մահկանացուն կնքեց Ցաճկահայոց նշանաւոր գործիչներից մէկը՝ մանկավարժ և հեղինակ՝ Ռեթէոս էֆենդի Պերպերեան։ Պոլսոյ հայ թերթերը անխտիր ողբում են նորա կորուստը. հասարակութեան ամեն խաւերի ցոյց տուած կենդանի մասնակցութիւնը յուղարկաւորութեան խուռն հանդիսին՝ ապացոյց է, որ հանցեալը մեծ համակրութիւն էր վայելում։ Յուղարկաւորութեան նախագահել է Ս. Պատրիարքը Օրմանեանը և գեղեցիկ դամբանական խօսել նորա յիշատակին։

Հանգուցեալը ծնուած էր Պոլսոյ թաղերից մէկում՝ Խասգիւղում 1850 թ. երիտասարդ հասակից իւր ուժերը նուիրել է մատաղ սերնդի դաստիարակութեան գործին, 1876 թ. հիմնեց նա իւր նշանաւոր Պերպերեան վարժարանը նախ Գատը գիւղում, որ ապա փոխադրեց Իւսկիւտար. վեց տարի առաջ նա տօնեց այդ դպրոցի 25 ամեակը, որ բազմաթիւ կրթուած երիտասարդներ է հասցրել հասարակութեանը։

Բացի մանկավարժական գործունէութիւնից՝ նշանաւոր է հանդիսացել նաև իբրև գրագէտ՝ իւր թարգմանական և ինքնուրոյն գրուածներով։ Յատկապէս իմաստասիրական մանկավարժական խնդիրները նորա ուսումնասիրութեան սիրելի նիւթերն էին, ինչպէս «Դաստիարակի մը խօսքերը», «Խոհք և Ցուշք», «Գեղեցիկն ու Գեղարուեստ» աշխատութիւններն են ցոյց տալիս։

Պերպերեան էֆենդին մասնակցել է նաև պատրիարքարանի վարչական գործերին։ Յատկապէս շեշտուում է նորա ատենապետութիւնը Ուսումնական խորհրդին, երբ պատրաստուեցաւ Ցաճկահայոց դպրոցների ներկայ ուսումնական ծրագիրը։

Ս. Պատրիարքը յանձն է առել Պերպերեան վարժարանի բարձր հսկողութիւնը, խոստանալով ըստ առաջնոյն ապահովել այդ օգտակար հաստատութեան գոյութիւնը։ Վարժարանի ժամանակաւոր կառավարիչ է նշանակուած Պետրոս էֆենդի Կարապետեան։